**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ,
Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am

N 213
*01 հոկտեմբեր 2018թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԳԱԳԻԿ ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Միրիջանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրություններն ու ընդունած որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **Խ. ՔՈՉԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 23

## ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ,159-րդ հոդվածներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գայ համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 10-ի թիվ 2 որոշումը

Կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավար Սեյրան Մարկոսյանին տրամադրել 2018 թվականի ամենամյա արձակուրդը՝ սույն թվականի սեպտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 10-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ (20 աշխատանքային օր՝ նվազագույն և 4 աշխատանքային օր՝ լրացուցիչ)։

2.Սեյրան Մարկոսյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հոկտեմբերի 11-ից։

3.Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես վերապահել Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին։

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 24

## ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով

.

Կարգադրում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի կարիքների համար 'համակարգչային սարքավորումների ձեռքբերման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել Գայի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Անահիտ Տերտերյանին ,իսկ գնումների համակարգող՝ Գայանե Հակոբյանին:

2.Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Խ. ՔՈՉԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 47

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով.

Որոշում եմ.

1.Քաղաքացի Երեմ Ռուբենի Հովյանին ՝ Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող , սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում ինքնակամ շինություն կառուցելու համար , տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2.Պարտավորեցնել Երեմ Ռուբենի Հովյանին որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում օրինականացնելու ինքնակամ շինությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Խ.ՔՈՉԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 46

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով.

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 20-ի<<Ինքնակամ կառույցները օրինական ճանաչելու մասին>> թիվ 42 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)Որոշման 6-րդ կետում նշված ինքնակամ կառուցված շինության մակերեսի 3885քմ թիվը փոխարինել 3855քմ թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Խ. ՔՈՉԱՐՅԱՆ